ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԵԶ ՀՈՒՇՈՒՄ ԵՆ...

Առաջադրանքներ

1. Ա և բ շարքերից ընտրիր մեկական ածանց և արմատ, կազմիր ածանցավոր բառեր.

ա) ան–, տ–, տրամ–, մակ–, համ(ա)–, դժ–, չ–:

բ) ձև, գիր, կեղծ, երես, գոհ, ձայն, տես:

2. Ա և բ շարքերից ընտրիր մեկական արմատ և կազմիր բարդ բառեր.

ա) գետ, կես, լուռ, ձյուն, միրգ, բալ, նոր,

բ) հանդես, գույն, գիշեր, եզր, մունջ, լուսին, ծածկ:

3. Կարդա՛ երկխոսությունը: Լրացրո՛ւ աղյուսակը յուրաքանչյուր սյունակի պահանջին համապատասխան:

– Մարգարի՛տ, ալիքները գանգատ ունին, նրանք անտուն են, թափառական ու գանգատ ունին:

– Տարօրինակ բաներ ես մտածում, Կոմիտա՛ս,– խոսքը կրկնեց Մարգարիտը, և որպեսզի Կոմիտասը չգնա կնճռոտ մտքերի հետևից, հիշեցրեց.

– Դու ինձ խոստացար նոր երգ:

– Մնա լուսնկային:

Պարզ բառ	Նախա–ծանցավոր բառ	Վերջա–ծանցավոր բառ	Բարդ բառ	երգ + արմատ արմատ + երգ

4. Գտի՛ր տրված բառերի արմատները և ընդգծի՛ր:

Փոքրիկ, արջուկ, որսորդ, հատվածային, մայրական, տնակ, հերկել, խնձորենի, խոսք, պահակ, ուսուցիչ, աշակերտական, ոսկեղեն, բանակային, մատնոց, ծառաստան, գյուղացի, սեր–

մացու, հռչակավոր, երևանցի, համեղ, սահուն, գունատ, Հայաստան, ընկերաբար, կանաչավուն, հենակ, գնորդ, աճուրդ, զորություն:

5. Բառերը բաժանի՛ր բաղադրիչների՝ առանձնացնելով նախածանցը, արմատը, վերջածանցը:

Նախագրային, բացահայտիչ, դժբախտություն, դժկամորեն, արտահագուստ, դերակատարություն, բաղադրիչ, ապօրինի, գերադասելի, մակընթացություն, բացահայտորեն, ապազգային, ներդրավոր, ներմշակութային, տրամագծորեն, վերստուգիչ, հակադրություն, փոխպատվաստում, ենթակայական, արտերկրացի, անտեսանելի, արտահայտիչ:

Նախածանց	Արմատ	Վերջածանց
նախ(ա)-	գր	-ային,

6. Տրված նախածանցներով երկուական բա՛ռ կազմիր:

1. առ -
2. թեր -
3. ենթ -
4. ընդ -
5. վեր -
6. փոխ -
7. ց -
8. պար -
9. ան -
10. ապ -
11. դժ -
12. չ -